Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Դաշտադեմ բնակավայր

10.12.2025թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում Սահիդներ դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում, արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային քննարկման վերաբերյալ:**

2025թ. դեկտեմբերի 10-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող՝ Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում՝ Սահիդներ դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում, արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը ներկա էին. Թալին համայնքի ներկայացուցիչները, Դաշտադեմ բնակավայրի ղեկավարը, բնակիչները, Նախաձեռնողի ներկայացուցիչները, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»ՊՈԱԿ-ի մասնագետը:

**Հանրային քննարկման ընթացքում ելույթ ունեցան.**

**Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»ՊՈԱԿ-ի մասնագետ Վարդան Հարությունյանը** Ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացը, նշելով որ սահմանված կարգով հաշվետվությունը ներկայացվել է համապատասխան գերատեսչություններին և նախարարության ստորաբաժանումներին՝ կարծիքների: Վերջիններիս և ՊՈԱԿ-ի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացում լրամշակված հաշվետվությունը կրկնակի ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին, որի շրջանակներում որոշ ստորաբաժանումներ՝ Ջրային ռեսուրսների կառավարման և մթնոլորտային քաղաքականության վարչությունների կողմից առաջացել են երկրորդային հարցադրումներ՝ պարզաբանման նպատակով: Հավելեց, որ բնակիչները կարող են իրենց առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել ծանուցման օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում:

**ՇՄԱԳ հաշվետվության կազմող «Նովալ»ՍՊԸ-ի ներկայացուցիչ Թ. Նուրիջանյանը** ներկայացրեց նախատեսվող գործունեության՝ արևակայանի կառուցման լուծումները: Նշեց, որ կառուցվելու է ֆոտովոլտային արևակայան՝ 7.4 հա տարածքի վրա, տեղադրվելու են բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներ, ենթակայան, օդային գիծ: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների

փոփոխություններ չեն կատարվելու, նոր ճանապարհներ չեն կառուցվելու, օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները: Բացվելու են նոր աշխատատեղեր բնակիչների համար: Ներկայացրեց գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային և ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, ինչպես նաև մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ուղղված միջոցառումները, մոնիթորինգը, ինչպես նաև փակման փուլի ազդեցությունները և միջոցառումները: Նշեց, որ գործունեության ենթակա տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, հնագիտական շերտերը: Այնուհետև պարզաբանեց նախարարության ստորաբաժանումների կողմից երկրորդային հարցադրումներին, տալով սպառիչ պատասխան:

**Վարչական ղեկավար Ա. Մարտիրոսյանը** դիմեց բնակիչներին առաջարկելով արևակայանի կառուցման վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրաձայնել, միաժամանակ նշելով համայնքի վերահսկողության կարևորությունը արևակայանի կառուցման և շահագործման փուլերում:

**Բնակիչները** հարց բարձրացրեցին թափոնների, մասնավորապես վնասված վահանակների՝ մարդու համար դրանց վտանգավորության վերաբերյալ, միաժամանակ կարևորեցին բնակիչների կողմից տեղեկատվության հասանելիության անհրաժեշտությունը:

**Թ. Նուրիջանյանը** կարևորեց հարցադրումը, նշելով շահագործման փուլում վնասված արևային վահանակների պահպանման լուծումները ներառված են ՇՄԱԳ հաշվետվությունում, դրանք չպետք է տեղադրվեն բաց տարածքներում, աղբավայրերում՝ արևի ճառագայթների տակ: Այդ նպատակով ընկերության կողմից նախատեսված է համապատասխան մակերեսով պահեստային տարածք, որտեղ առանձնացված տարածքում կտեղադրվեն վնասված վահանակները՝ մինչև Հայաստանի Հանրապետությունում կմշակվի ռազմավարություն՝ նշված խնդիրները լուծելու համար: Նշեց, որ հաշվետվությունում նախատեսված է համայնքի մասնակցությունը և վերահսկողությունը՝ մշտադիտարկումների ձևաչափով:

**Վ. Հարությունյանը** հարց բարձրացրեց օդային գծի ուղեգծի վերաբերյալ:

**Թ. Նուրիջանյանը** պատասխանեց, որ օդային գիծն անցնում է երկու՝ Թալին և Դաշտադեմ բնակավայրերի վարչական տարածքներով, հիմնական մասը անցնելու է Դաշտադեմ բնակավայրի համայնքային հողերով: Նշեց, որ ՕԳ-ի հենասյուները տեղադրվելու են համայնքային հողերում, չեն առնչվում մասնավոր անձանց հողային տարածքների հետ:Հավելեց, որ ՕԳ-ի ուղեգիծը համաձայնեցվել է համայնքի հետ, համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո հենասյուների տեղադրման համար կկնքվի սերվիտուտի պայմանագիր:

**Նախաձեռնողի ներկայացուցիչ Գ. Աղաբեկյանը** կարևորեց սոցիալական ներդրումները համայնքում, նշելով որ նոր բացվող աշխատատեղերում կներգրավվեն հիմնականում Դաշտադեմ բնակավայրի բնակիչները:

**Թալին համայնքի քաղաքաշինության և հողերի բաժնի պետ Գ. Միրզախանյանը** նշեց, որ Թալին համայնքի տարածքը նպաստավոր է արևակայանների կառուցման համար: Գյուղացիների կողմից կարող են լինել որոշակի անհանգստություններ արոտավայրերի կրճատման համար, բայց վերջին շրջանում այդ անհանգստությունները նվազել են, քանի որ մարդիկ ունենում են աշխատատեղեր, եկամուտներ:

**Նախաձեռնողի ներկայացուցիչները** նշեցին, որ արևակայանի տարածքում՝ վահանակների տակ, որոշ ժամանակ անց ձևավորվում է կանաչ խոտածածկ, ուստի գյուղացիների մանր եղջերավոր անասունները կարող են արածել այդ տարածքում:

**Գ. Միրզախանյանը** կարևորեց համայնքում կատարվող ներդրումները, հատկապես եթե դրանք փոխշահավետ են համայնքի համար՝ ողջունելի են:

**Այլ հարցադրումներ չեղան:**

**Վարող՝ «ՇՄԱՓ կենտրոն»ՊՈԱԿ-ի**

**մասնագետ՝ Վ.Հարությունյան** ______________________

**Նախաձեռնողի ներկայացուցիչ՝**

**Գ. Աղաբեկյան** ______________________